# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077663222

N- 80

« 05 » օգոստոսի 2019թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 5-ի թիվ 8 հերթական նիստի որոշումները:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 23

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6- րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 5-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված

Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 05.08.2019թ. N- 23 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվական օգոստոսի 5 -ի N 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

2. Խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի համայնքապետարանի տարածքում առկա ազդարարման համակարգի սարքավորումները և դրանց լրակազմերը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
05 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի երկրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման պահանջները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի , ավագանու 2019 թվականի ապրիլի 5-ի թիվ 12-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

# ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի օգոստոսի «5» N 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱԿԱԶՄԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 346-Ն որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի համայնքապետարանի տարածքում առկա LD-800 մակնիշի էլեկտրական շչակը և դրա լրակազմ հանդիսացող կառավարման վահանակը և էլեկտրական հաշվիչը որպես գույքային արժեք, հաշվառել համայնքի հաշվեկշռում:

2. Սահմանել, որ վերը նշված ազդարարման համակարգի սարքավորումների պահպանման և սպասարկման համար պատասխանատու են հանդիսանում՝

ա) համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը.

բ) համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման խումբը.

3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ